Ստորագրող
ԱՐԹՈՒՐ ԽՈՒԴՈՅԱՆ
1414910444

2025-11-28 13:18:09 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Հավելված 5**

**«ԷԱՃԱՊՁԲ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167 »* ծածկագրով**

**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**__ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167-1**

ք. Երևան ____/____________/2025թ.

« Երևանի քաղաքապետարան »-ը ի դեմս պատշաճ լիազորված անձ (Երևանի քաղաքապետի 2018թ. 3407-Ա որոշում) Վ. Պապիկյան ի, որը գործում է « Երևանի քաղաքապետարան »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « Ա/Ձ Արթուր Խուդոյան »-ը, ի դեմս տնօրեն Արթուր Խուդոյան ի, որը գործում է « Ա/Ձ Արթուր Խուդոյան »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում

նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

—

—

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային

օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1453000.00 AMD(մեկ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար դրամ ) ՀՀ դրամ:7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

8

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն

վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի` պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

__ [5]:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11[6]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11.1 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը, իսկ գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում՝ բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում

են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ______էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը:

13[8]

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | Ա/Ձ Արթուր Խուդոյան |
| Արգիշտիի փող. 1 | Արարատի մարզ գյուղ Լանջազատ Նժդեհի 35 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչութուն | Արդշին բանկ |
| 900012001880 | 2479901084140000 |
| 02593108 | 47938293 |
| -------------------------------- | -------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

17[6]*Կիրառվում է, եթե կնքվում էնախագծայինփաստաթղթերիքաղաքաշինականփորձաքննության ծառայություններիմատուցմանպայմանագիր*

[17]*Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[8]*Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուիև Կատարողիմիջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապաայսկետըհանվումէնախագծից:*

[9]*Եթեպայմանագիրըկնքվելէ«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապատուգանքըհաշվարկվումէայնհամաձայնագրիգնինկատմամբ, որի շրջանակումարձանագրվելէստանձնվածպարտավորությունների չկատարմանկամոչպատշաճկատարմանհանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[10]*Պետականբյուջեիմիջոցներիհաշվինպարտավորություններչառաջացնող գնումներիդեպքումսույննախադասությունըպայմանագրիցհանվումէ:*

[11] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[12]*Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[13]*Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով*

ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
____/___________/2025թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | 79951110/284 | մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ | Ամանորին նվիրված միջոցառումների կազմակերպում` «Փրկելով Սուրբ Ծննդյան տոները» խորագրով: Ծրագրի շահառուներ Ծրագիրը նախատեսվում է իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված թվով 500 երեխաների համար` ըստ նախապես կազմված խմբերի: Ծառայության նպատակը` Ապահովել երեխաների իմաստալից, ուրախ և ստեղծագործ մասնակցությունը Ամանորի տոնական միջոցառումներին` խթանելով նրանց դրական էմոցիաները, հաղորդակցական հմտությունները և մշակութային արժեհամակարգի ճանաչումը: Ծառայության նկարագիրը. Երեխաները Ձմեռ պապի և էլֆերի մասնակցությամբ պետք է լուսավորեն Սուրբ Ծննդյան եղևնին` միջոցառման սկիզբը մեկնարկելու համար: Հայտնվում է Գրինչը և փորձում գողանալ Սուրբ Ծննդյան տոները: Այն փրկելու համար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | երեխաները պետք է ստեղծագործական մարտահրավերներ հաղթահարեն՝ իրականացնելով տարբեր գործողություններ, մասնավորապես. 1. Ստվարաթղթե տնակների կառուցում /երեխաները զարդարում են փոքր տնակների կառուցվածքներ, պատրաստված նախապես ծալված հաստ ստվարաթղթից՝ օգտագործելով արհեստագործական նյութեր՝ սոսինձ, փայլ, բամբակ, գունավոր թուղթ, ժապավեններ, կպչուն պիտակներ և այլն/, 2. Թխվածքաբլիթներով տնակների կառուցում /երեխաները կառուցում և զարդարում են փոքրիկ թխվածքաբլիթե տնակ՝ օգտագործելով տրամադրված հավաքածուները՝ քառակուսի կամ ուղղանկյուն թխվածքաբլիթներ, փոքրիկ մարշմելոուներ, փոքրիկ գունավոր կոնֆետներ, գունավոր շաքարահատիկներ, շաքարի փոշի, թղթե ափսեներ և այլն/, 3. Երեխաները աղի խմորից կամ չորացրած կավից ձևավորում են զարդեր՝ աստղեր, զանգակներ, սրտիկներ և այլն, ներկում դրանք, ավելացնում իրենց անունները: Անհրաժեշտ նյութերը՝ խմոր/կավե նյութեր, ներկեր, վրձիններ, փայլեր, ժապավեններ, անվանական պիտակներ և այլն: 4. Երեխաները մեկանգամյա օգտագործման թղթե բաժակներից պատրաստում են զարդեր, որի համար անհրաժեշտ են թղթե բաժակներ, բամբակյա փայտիկներ, գունավոր թղթեր, սոսինձներ, մկրատներ, զարդարանքներ, պիտակներ, ժապավեններ և այլն: 5. Երեխաները զարդարում են կերամիկական բաժակ և մոտենում են տաք շոկոլադի անկյանը: Բաժակները զարդարելու համար անհրաժեշտ են ակրիլային ներկեր, մարկերներ, նախապես տպված ձևանմուշներ, ծածկող սփրեյ և այլն: Տաք շոկոլադե սալիկի համար՝ կականյի փոշի, կաթ, գդալներ, մարշմելոու, հարած սերուցք, փոքր գունավոր կոնֆետներ, շոկոլադե չիփսեր, անանուխ, գունավոր շաքարահատիկներ, քաղցրավենիք և այլն: 6. Թխվածքաբլիթների |

| | | | |
|---|---|---|---|
| | | | զարդարանք, որի համար երեխաները ստանում են 2 սովորական թխվածքաբլիթ /կլոր կամ աստղաձև/: Թխվածքաբլիթի զարդարանքի համար անհրաժեշտ են փոքրիկ գլազուրով տոպրակներ /սպիտակ և գունավոր շաքարի փոշիով/, մեծածավալ գունավոր շաքարահատիկներ, փոքրիկ գունավոր կոնֆետներ, պիտակներ և այլն: 7. Գուլպաների զարդարանք, որի համար անհրաժեշտ են գուլպաներ կամ դրանք պատրաստելու նյութերը, սոսինձ, մկրատ, ժապավեններ, բամբակ, մարկերներ, փայլեր, կպչուն պիտակներ, կոճակներ, զանգակներ, թուղթ, քաղցրավենիք և այլն: 8. Մրգերից կենդանիների /ոզնի, դելֆին և այլն/ ստեղծում, որի համար յուրաքանչյուր երեխա ստանում է մրգերի փոքր հավաքածու / որպես հիմք` խնձոր կամ նարինջ, ձևավորման համար` խաղող, բանան, մանդարին և այլն/: Անհրաժեշտ են ատամի չոփիկներ, չամիչ, պլաստիկ դանակներ, փոքրիկ Սուրբ Ծննդյան գլխարկներ կենդանիների համար նախատեսված պարագաներ: Ստեղծագործական մարտահրավերները հաղթահարելու ընթացքում էլֆերը պատմում են «Գրինչի Սուրբ Ծննդյան տոները գողանալու փորձի» պատմությունը, վարում կարճ ինտերակտիվ խաղեր /«Փոխանցեք զարդը»,«Ձմեռ պապի գլխարկով երաժշտական աթոռներ»,«Գտեք կորած նվերը»,«Թափահարեք ձնագնդիկները»/: • Միջոցառման իրականացման ընթացքում ապահովել շահող կազմակերպության ներկայացուցչ/ներ/ի մասնակցությունը` միջոցառումը պատշաճ և անվտանգ կազմակերպելու և իրականացնելու նպատակով, • Միջոցառման օրը և ժամը համաձայնեցնել պատվիրատուի հետ, • Ներկայացվող միջոցառումները անհրաժեշտ է համաձայնեցնել պատվիրատուի հետ, • Անհրաժեշտության դեպքում պայմանագրի կողմերից որևէ մեկի պահանջով կարող են |

| | | | |
|---|---|---|---|
| | | | իրականացվել լրացուցիչ քննարկումներ, • Ծառայության իրականացման ավարտից հետո շահող կազմակերպությունը պետք է ներկայացնի բովանդակային հաշվետվություն: Ծառայությունների մատուցման տևողությունը` Մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը : |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Երևանի քաղաքապետարան**
**Հասցե` Արգիշտիի փող. 1**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչութուն**
**900012001880**
**02593108**
**պատշաճ լիազորված անձ (Երևանի քաղաքապետի 2018թ. 3407-Ա որոշում) Վ. Պապիկյան**
**___________**
**/ստորագրություն/**
**Կ.Տ**

**ԿԱՏԱՐՈՂ**
**Ա/Ձ Արթուր Խուդոյան**
**Հասցե` Արարատի մարզ գյուղ Լանջազատ Նժդեհի 35**
**Արդշին բանկ**
**2479901084140000**
**47938293**
**Արթուր Խուդոյան**
**___________**
**/ստորագրություն/**
**Կ.Տ**

Հավելված N 2
____/___________/2025թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167 ծածկագրով պայմանագրի

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | հասցեն | Ժամկետը** |
| դրամ | 1453000.00 | 1453000.00 | 1 | Ք. Երևան | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո ըստ պատվիրատուի պահանջի մինչև 25.12.2025թ |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Երևանի քաղաքապետարան**
**Հասցե՝ Արգիշտիի փող. 1**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**900012001880**
**02593108**

**ԿԱՏԱՐՈՂ**
**Ա/Ձ Արթուր Խուդոյան**
**Հասցե՝ Արարատի մարզ գյուղ Լանջազատ Նժդեհի 35**
**Արդշին բանկ**
**2479901084140000**
**47938293**

պատշաճ լիազորված անձ (Երևանի քաղաքապետի 2018թ. 3407-Ա որոշում) Վ. Պապիկյան

____________

/ստորագրություն/

Կ.Տ

Արթուր Խուդոյան

____________

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3

____/___________/2025թ. կնքված

ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 1 | 79951110/284 | մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ | | | | | | | | | | | | 1453000.00 | 1453000.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ` որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | Ա/Ձ Արթուր Խուդոյան |
| Հասցե՝ Արգիշտիի փող. 1 | Հասցե՝ Արարատի մարզ գյուղ Լանջազատ Նժդեհի 35 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Արդշին բանկ |
| 900012001880 | 2479901084140000 |
| 02593108 | 47938293 |
| պատշաճ լիազորված անձ (Երևանի քաղաքապետի 2018թ. 3407-Ա որոշում) Վ. Պապիկյան | Արթուր Խուդոյան |
| ___________ | ___________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 4
____/___________/2025թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________ | հհ ____________ |
| հվհհ ____________ | հվհհ ____________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20____թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «______________________» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________________» 20__թ. դուրս գրված N __ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | մշակութային միջոցառումների կազմակերպ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ման ծառայություններ | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| | |
|---|---|
| **Ծառայությունը հանձնեց** | **Ծառայությունն ընդունեց** |
| ______________________ | ______________________ |
| **ստորագրություն** | **ստորագրություն** |
| ______________________ | ______________________ |
| **ազգանուն, անուն** | **ազգանուն, անուն** |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

Հավելված N 4.1
____/___________/2025թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Երևանի քաղաքապետարան -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Ա/ձ Արթուր Խուդոյան (այսուհետ՝ Կատարող)

միջև 20__թ.______________________________-ին կնքված N ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _________________________-ին հանձնման-ընդունման նպատակով

Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ | դրամ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

______________________________

**ազգանուն, անուն**

______________________________

**Ստորագրություն**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________

**ազգանուն, անուն**

______________________________

**Ստորագրություն**

Հավելված N 5
____/___________/2025թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-25/167 ծածկագրով պայմանագրի

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

___________________________________________________________________հայտնում է, որ .

ֆինանսական գործակալի անվանումը

1. (պատվիրատուի (գնորդի) անվանումը)-ի և (կատարողի (վաճառողի) անվանումը) միջև «--» 20 թ. կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և (կատարողի (վաճառողի) անվանումը)-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.11.1 (ապրանքի գնման դեպքում 8.11.1) կետով սահմանված պահանջներին:

____________________________________ ______________

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անունը ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.